20. ՄԱՔՅԻ ԱՊՈՒՆ ՄՈՐՈՒՆ ՆԱՂԼԸ

Մեհետ կյարունքը մին բող էշ ունինքյ, նստեցե քյնա̈ցե, թա̈ Երգյան Գյունան փա̈դ պիրիմ։ Փա̈դ ըրած կյալիս, մեր շընացե Շա̈միրը ինձ շհից, թա̈.— Մաքյի դայի, մեր եղնը տեսալ չը՞ս։

Ըսեցե.— Չէ՛, քումմատա՛զ։

Մին էլ պատառ վեր եկե ըտըղան, եշեցե տեսե, ճոխտակ եխծեն դո̈շումը, կինի տհենց մին քսան վերստը, մին պեն ա կյըմիրի տամ։

Ըսեցե.— էս կա, չիկա, մեր Շա̈միրին եղնըն ա։

Ըսեցե թա̈ ծեն տա՛մ, մնգ էլ կասիմ, այշի՛, չէ՛, էս ա ընդեղավ ըմ քյննա̈կան, յըես կտանիմ։

Քյեցալ ըմ, քյեցալ, մուտացալ էս կյարմո̈ւր պենին, տեսալ եղնը չի՛, մին մեծ մորե յա հսած, փըսած, կյըմըրա̈՛ծ։

Յրան ինգի՛, մին լա̈վ կերե։ Մին խուրշին կար էշիս յրան, կացենս եր կալի էս մորես ճղուրտեցե, ըծեցե խուրշինս, պերե տոն։

Խոխենքյս էտ մորուն կեսը կերեն, կեսն էլ կտուրեցեն չուրըցըրեն, չա̈մենչ շինեցեն։ Հա̈լլա̈ միչև օրս էլ էտ մորեն մննաս քյինո̈ւմ չի՛։ Ամմեն տարե քյնա̈մ ըմ ընդեղ տեսնում, էլհա իտի մորե յա ինո̈ւմ փըսած... Մին լա̈վ ոտում ըմ, էլհա կացենս յոր օնըմ, ճըղորտում էտ մորեն, խուրշինս ածըմ, պերըմ տոն։ Կեսը խոխենքյը ոտըմ ըն, կեսն էլ չուրուցընըմ, սաղ ծմեռնը ոտըմ։ Ամմեն տարե քյինա̈մ ըմ ընդեղ, տեսնում, էլհա իտի մորե կա՛։